

# ՇԵՓՈՐ

Литературный, общественно—политический и экономический еженедельный журнал

# ШЕПОРЪ

ԳՐԱԿԱՆ, ՀՀՍԱՐԱԿԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳԻՆՆ Է 7 ԿՈՊ.

ՇԱՏԱԹԱԹԵՐԹ

ՇԵՆԱ 7 ԿՈՊ.

Временный адресъ редакціи: В. Морская, д. Межлумова, кв. № 10

№ 4

Ա Ռ Ա Ջ Ի Ն Տ Ա Ր Ի

№ 4

ԲԱՍԻՍԱՆ Է ԲԱԺԱԿԼՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԵՏԵՆՈՂԱԿԱՆ ՄԱՐՔՍԻՉՄԸ ԵՒ ԳԻՒՂԱՑԻՈՒԹԻՒՆԸ\*)

## „ՇԵՓՈՐ“

Գրական, հասարակական, քաղաքական, անտեսական հանրամատչելի շաբաթաթիւրթի.

Բաժանորդագրութեան պայմանները.  
Բազում տարեկան—4 ռ., վեց ամիսը—2 ռ.,  
Բազուց դուրս—տարեկան 5 ռ., վեց ամիսը—  
2 ռ. 50 կ.

Արտասահման տարեկան 8 ռուբ.  
Տարեկան բաժանորդները կտանան գրտական-ֆենական ծոզովածու:  
Յայտարարութիւնները ընդունուած են ամեն լիզուներով:

Դիմել՝ Баку, Редакция „ШЕПОРЪ“  
Արտասահմանից՝ Bascou, Redaction du journal  
«CHÉPHOR».

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հետևողական մարքսիզմը և գիւղացիութիւնը.—Բիւրազի Գարսիական շարժումների շուրջը.—Ա. Յովաննիսեանի Մամուլը.—Աշխատաւորների կեանքից.—Թղթակցութիւններ.—Նակակ խմբագրութեան.—Յայտարարութիւններ:—

Այն արգումենտները, որը բերուած է Մարքսը, իր հիմնական թէզիսը—գիւղացիական մասաների անխուսափելի պրոլետարացումը—ապացուցանելու համար, կարելի է կտրտել երկու կաթիկոբի: Առաջին կաթիկոբիին են պատկանում այն բոլոր արգումենտները, որոնք ըզխում են կապիտալիստական արդիւնարերիակերպի ընդլծից և որոնք, ըստ Մարքսի նոյնքան կիրառելի են գիւղատնտեսութեան, որքան և որևէ ուրիշ արդիւնարերական ապարդի նկատմամբ: Երկրորդի մէջ են մտնում այն արգումենտները, որոնք, իբր թէ, յատուկ են միայն գիւղատնտեսութեան:

Մենք կանգ կառնենք նախ և առաջ մարքսեան հիմնաւորումների այս երկրորդ շարքի վրայ:

Ըստ Մարքսի, տնայնագործութեան անկումը—և սրա հետ գիւղացիական ստանդակ վաստակի վերացումը—մանք գիւղացիական տնտեսութեան քայքայման ամենից կարելոր պատճառներից մէկն է:

Այս յայտարարութիւնը վերին աստիճանի յատկանշական է Մարքսի ազարային մտածողութեան համար: Ուս ոչ այլ ինչ է, եթէ ոչ նանրացումը մի դրովեան, որը ճիշտ է միմիայն մի երկրի՝ Անգլիայի նսմար, ուր տնայնագործութեան անկումը իբրք եղել է մանք գիւղացիութեան, իբր արն-

\*) Տես «Շէփոր» № 3.

տեսական մի կաթեզօրի, անկման ամենից կտրելու պատճառներինց մէկը, եթէ ոչ ամենակարևոր պատճառը Անտարտիդոս, ուրիշ երկիրներէ մէջ ևս, ինչպէս օր. Գերմանիայում, Ռուսաստանում և հէնց մեզ ձուս Անգրիզիկատում, տնայնագործութեան անկումով աշխատուոր գիւղացիութիւնը զրկել է իր եկամուտի մի մասից, սակայն այդ անկումը հետևուոր չափով անգամ նոյն հետևանքները չի ունեցել: Ինչ որ Անգլիայում:

Ապա, ըստ Մարքսի, մի անխուսափելի երևոյթ է նամայնական Նոդերի կտրուկուտը կաշւածառիական պնակամութեան ձևով: Երբ հետևանքն է գիւղացիական անասնապահութեան վերացումը: Այս գրութիւնը ևս պարզ հանրացումն է ազրարային յարաբերութիւնների զարգացման անգլիայում, որ այդ կտրուկուտը իսկապէս տեղի է ունեցել և մի շարք ուրիշ հանգումները հետ միասին կորուստի է մատնել Անգլիական անկախ գիւղացիութիւնը: Ուրիշ երկիրների մէջ մնոր դիտում ենք նամայնական Նոդերի կտրուկուտը գիւղացիների վրայ, իբր մասնաւոր սեփականութիւն այս վերջինների և մենք գիտենք այժմ, որ այն, ինչ որ տեղի է ունեցել Անգլիայում, բացառութիւն է և ոչ թէ կանոն ազրարային էվոլուցիայի մէջ:

Անգլիական գիտադոթիւնների արդիւնք է վերջապէս և այն պնդումը, որով կապիտալիստական գիւղատնտեսութիւնը անպայման կապւած է կապալաւորական սխտեմի հետ: Ընտ չի մտածում բնաւ, որ մէկն ու մէկը կարող է այդ կասկածի ենթարկել: Այդպիսի դրութիւն նա տեսնում է Անգլիայում և նրա համար արդէն աներկբայելի է, որ նոյնը—աւել կամ պակաս որոշութեամբ—տեղի պիտի ունենայ ամենուրէք և կապիտալիստական պարզացման բոլոր փուլերի մէջ: Երբ ուրիշ երկրների որոշ հանգումները կամ դէպքերը, տարբերութիւններ են ցոյց տալիս անգլիականից, այդպիսի պարագայում այդ երկրները բացառութիւններ են ստակ, իսկ Անգլիան միշտ կանոն է» (Բժնշտեզա):

Անհամեմատ աւելի մնայուն, արժէքաւոր և շարքստական են այն հիմունքները, որը քաղել է Մարքսը կապիտալիստական արդիւնաբերելակերպի բնոյթից գիւղացիական տնտեսութեան ետամնացութիւնը և անդիմացկանութիւնը ապացուցանելու համար:

Բացի ծնալիստական սօցիալիզմի ամենից խոշոր ներկայացուցիչներից մէկն արդէն, Շարլ Ֆուրիէն, Մարքսից շատ առաջ մատնանշել է թերութիւններից մի քանիսը, որոնցով օժտած է մանր գիւղացիական տնտեսութիւնը «Տնտեսութեան հատւածակա-

նութիւնը—ասում է նա—արդիւնք է հանդիսանում մի շարք հանրային ձեռնարկութիւնների, որոնք անհրաժեշտ են գիւղատնտեսութեան համար, որպիսի են ստացումը, հողի պարարտացումը, ճահիճների ցամաքացումը և այլն: Գիւղացիութիւնը չափազանցօրէն կըշահէր, եթէ նա կանկնար բազմաթիւ խրճիթները և գիւղատնտեսական մանր շինութիւնները փոխարինելու մի հատ խոշոր կանրակացարանով և տնտեսութեան համար անհրաժեշտ շինութեամբ: Նա կը խնայէր այդպիսով իր աշխատանքը, կը շնորհէր արդիւնաբերութեան համար անհրաժեշտ ծախսերը և անչափ կուելացնէր գիւղատնտեսութիւնից ստացուող բերքերի քանակը:

Ինչ ստի կուզի, որ Մարքսի տնտեսագիտական արգումենտացիան անհամեմատ աւելի լրիւ է և բազմակողմանի:

Մինչդեռ կապիտալիստական խոշոր գիւղատնտեսութիւնը լայն հնարաւորութիւնն ունի օգուելու աշխատանքի միացումից և բաժանումից արդիւնաբերութեան պրօցէսի ընթացքում, մինչդեռ նա կարողութիւնն ունի կիրսուելու գործնականին մէջ տեխնիկայի և քիմիայի վերջին խօսքը, մինչդեռ նա, իր ծաւալով արդէն, ընդունակ է մեծ իննայողութիւններ անելու թէ բանւորական օյժերի, թէ հում նիւթի, թէ արդիւնաբերական գործիքների և շինութիւնների մէջ, մինչդեռ նրա տրամադրութեան տակ են գտնւում խոշոր արդիւնագործութեան համար անհրաժեշտ այրման վարկի հաստատութիւնները—այդ ամենի դիմաց աշխատուորական մանր տնտեսութիւնը արդիւնաբերութեան պրօցէսի ընթացքում աշխատանքի բաժանումն ու միացում չի ճանաչում, զուրկ է գիտական տեխնիկայի և քիմիայի պահանջները գործադրելու հնարաւորութիւնից, շնորհիւ իր սահմանափակ ծաւալի, կարողութիւնը չունի խնայողութիւն աւելու հում նիւթի, գործիքների և շինութիւնների մէջ և չունենալով իր տրամադրութեան տակ արժան վարկ մատակարարող հիմնարկութիւններ, տառապում է ծայրահեղօրէն վաշխառուական տոկոսների ծանր բեռի տակ:

Մարքսի մեկնարանը, Կարլ Կաուտսկին, իր «Նոդային խնդրի» մէջ մանրամասն կերպով կանգ է առնում կապիտալիստական խոշոր գիւղատնտեսութեան առաւելութիւնների վրայ, գիւղացիական մանր տնտեսութիւնների դիմաց և գիտական մասնաւորացման ու զարգացման ենթարկելով վարպետի, յօգուտ խոշորների բերած տնտեսագիտական արգումենտացիան, յանդում է հետեւալ եզրակացութիւններին:

Սույն տնտեսութիւնը պիւրզանց է ման-

բից հէնց տնտեսականութեան շրջանակում, որովհետև լախ ծաւալով տարւող տնտեսականութեան մէջ, հնարաւոր է մեծ չափով աշխատանքի և նիւթի խնայողութիւնս «համեմատեալ մի խոշոր կալւած, որը նոյնքան հող է ընդգրկում, որքան 50 գիւղադիական մանր տնտեսութիւններ, մինք կտեսնենք մի խոշունոց մի օջաղով, իսկ այնտեղ 50 խոհանոց 50 օջաղով, Այստեղ մտեր, հաւանօրէն, 5 սինեակ կտաքացնեն և 5 հրազ կը վառեն, իսկ այնտեղ՝ 50: Այստեղ նաւթը, ցիգորին և մարզարինը մեծ քանակով կը գնեն, իսկ այնտեղ՝ փոքր»:

Նիւթի և հողային տարածութեան խնայողութիւն է տեղի ունենում խոշոր գիւղատնտեսութեան մէջ և տնտեսական անընթաց շինութիւնների նկատմամբ: Այստեղ 50—100 կով տեղաւորում են մի դոմի մէջ, իսկ այնտեղ անհրաժեշտ են 50 դոմ, որոնցից իւրաքանչիւրի մէջ մեռւմ են միայն 1—2 կով:

Սոշոր տնտեսութիւնը խնայում է նոյնպէս և ճանապարհների, ցանկապատների և սահմանադրողների մէջ: «20 ար. ծաւալ ունեցող 50 հողատար ցանկապատելու համար գործադրւում է 7 անգամ աւելի մատերիալ և աշխատանք, քան 10 հէքտար հողը մի ցանկապատով շրջապատելու համար: 10 հէքտար հողը միանգամից ցանկապատելու ժամանակ կորչում է 2<sup>1</sup>/<sub>2</sub> ար. իսկ 20 արանոց 50 հողատարների ցանկապատելը խլում է 18 ար»:

Կապիտալիստական խոշոր տնտեսութեան մէջ խնայողութիւն է կատարւում նոյնպէս և գիւղատնտեսական բոլոր պարագաների և գործիքների նկատմամբ: «Մինչդեռ 50 գիւղացիական տնտեսութիւն կարիքն ունեն 50 գութանի, 50 սայլի և այլն, մի խոշոր կալւած կարող է զուլի դուրս բերել անհամեմատ աւելի քիչով, զույգ այդ թիւ մի տանկորդ մատով»: «1883 թւին 1000 հէքտար մշակութեան տակ գտնւող տարածութեան վրայ գործադրւում են եղել 2—10 հէքտար ունեցող տնտեսութիւնների մէջ 2,84 շոգեկալողներ և 12,44 ուրիշ տեսակի կալտող մեքենաներ, իսկ 100-ից աւելի հէքտար ունեցող տնտեսութիւնների մէջ միայն 1,08 շոգեկալողներ և 1,93 ուրիշ տեսակի կալտող գործիքներ»:

Բացի այդ, մի շարք գիւղատնտեսական մեքենաներ կարող են միայն խոշոր տնտեսութիւնների մէջ կանոնաւոր կերպով գործադրել, որպիսի են, օրինակի համար, շոգեկալողները, շոգեշարժ և էլեքտրաշարժ գութանները և այլն:

Մի խօսքով, «մեքենաների կիրառման մէջ խոշոր տնտեսութիւնը ամենուրեք առաջ

է մանրից: Կալտող մեքենայից բացի, մանր տնտեսութիւնների մէջ չենք նկատում մեքենաների գործածութիւնս»:

Կապիտալիստօրէն տարւող խոշոր տնտեսութիւնների մէջ խնայում է և անասունների ոյժը: 1883 թւի գերմանական վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ մշակման ենթակայ 1.000 հէքտար հողի վրայ գործ են ածել 2—100 հէքտար ունեցող տնտեսութիւնների մէջ 111 ձի, 101 եղ և 451 կով, 100 հէքտարից աւելի ունեցող տնտեսութիւնների մէջ միայն 75 ձի, 65 եղև 137 կով:

Ապա, ինքն ըստ ինքեան արդէն հասկանալի է, որ տեխնիկական պատշաճ բարձրութեան վրայ գտնւող և հողամշակութիւնը զիտաւորապէս մեքենաներով տանող խոշոր տնտեսութիւնը խնայում է նոյնպէս և մարդկային ոյժը:

Սոշոր տնտեսութիւնը հնարաւորութիւն է տալիս աշխատանքի քանակում մտցնելու գիւղատնտեսական արդիւնաբերութեան մէջ, թէ արդիւնաբերութեան գործիքները, թէ անասունները և թէ աշխատաւոր ձեռները, ենթադրւում են սպեցիալ իրացիայի և յարմարելով միայն մի արդիւնաբերական ճիւղին, դառնում են անհամեմատ աւելի արդիւնաւէտ, քան մանր տնտեսութեան մէջ, ուր այդ սպեցիալ իրացիան գոյութիւն չունի և ուր նոյն ձեռները, նոյն անասունը և նոյն գործիքը գործադրւում են մի շարք իրարից լիովին տարբեր նպատակների համար:

Կապիտալիստական գիւղատնտեսութիւնը յարմարութիւնն ունի օգտուելու մասնագիտական ոյժերից, որովհետև այդպիսի տնտեսութեան մէջ միայն կարելի է լիովին կիրառել ագրոնոմիական գիտութեան բոլոր պահանջները պտղահեղձի, պտրաբուսացման, մեքենաների գործադրութեան և հաշւապահութեան նկատմամբ:

Վերջապէս, կանոնաւոր գիւղատնտեսութեան համար անհրաժեշտ մի շարք ձեռնարկութիւններ հնարաւոր են միայն խոշոր տնտեսութեան շրջանակում: Այդպիսի ձեռնարկութիւններ են հողերի ցամաքեցումը և ոռոգումը, դաշտային երկաթուղիները և այլն:

Սոշոր տնտեսութեան արդիւնաբերական ասպարէզում ունեցած այս ամեն առաւելութիւններին միանում են դեռ մի կարգ առաւելութիւններ վարկի և առևտրի ասպարէզում»:

Հում նիւթի, գործիքների և առհասարակ գիւղատնտեսութեան համար անհրաժեշտ բոլոր պարագաների գնումը, ապա գիւղատնտեսական ապրանքների փոխադրութիւնը դէպի շուկան, խոշոր տնտեսութեան մէջ տեղի է ունենում մեծ չափերով, մի կանգամանք, որը

Տնարարութիւն է տալիս կապիտալիստական գիւղատնտեսին անմիջական յարաբերութիւնների մէջ մտնելու խոշոր վաճառորդների եւ գնորդների հետ, աւելի արժան գնելու եւ աւելի թանկ վաճառելու եւ ազատում է նրան այդպիսով միջնորդների շահագործումից, որին այնքան մեծ շահով ենթակայ է աշխատաւոր գիւղացին:

խոշոր գիւղատնտեսութեան այս ակնյայտնի առաւելութիւնները հակակշռելու համար գիւղացիական տնտեսութիւնը մի առաւելութիւն ունի միայն, այն, որ այդպիսի տնտեսութեան մէջ օճակաւ գիւղացին լիովին սազատ է իրեն եւ իր ընտանիքը ծայրահեղորէն շահագործելու, ծիրելու ծանր աշխատանքի մէջ, իջնանելու իր վաստակարեկ գոյութեան կուլտուրական պահանջները մինչև մի աստիճան, որից աւելի ցածր անհնար է արդէն իջնել...

Մենք դիտումք այսքան մանրամասնորէն կանգ առնք կառուակու վրայ, որպէսզի ցոյց տանք, թէ որքան ինքն իրեն հաւատարիմ է Ֆրանսի մարքոսիզմը աշխատաւորական եւ կապիտալիստական գիւղատնտեսութիւնների համեմատական դնահատման խնդրի մէջ 1848-ից մինչև 1867-ը եւ 1867-ից մինչև 1902-ը, եւր կառուակին երկրորդ հրատարակութեամբ լոյս է բնծայել իր «Հողային խնդիրը»:

(Շարունակելի)

Րիխարդ



**ՊԱՐՍԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ**

Ընդհանրապէս ներկա Պարսկական շարժումների մասին միշտ պէտք է վերապահութեամբ կարծիք յայտնել եւ թէօրեական եզրակացութիւններ հանել, այլապէս վարւողը շատ յաճախ ստիպւած կլինի խոշոր սխալմաների մէջ ընկնելու Եւ այս խիստ բնական է. ամբողջ երկրի մէջ գոյութիւն չունի, կամ համարեայ գոյութիւն չունի որևէ լուրջ գրական աշխատութիւն երկրի տնտեսական եւ այլ հարցերին նախաձեռնող, պետութիւնը, աւելորդ է ստեղծել, անգամ, մի որևէ ստատիստիկա կազմելու մասին չի երազել անգամ, այսպիսով միայն քիչ թէ շատ վստահելի ազդիւր կարող են լինել Եւրոպական թերթերն ու հանդէսները եւ պաշտօնական գրքերը, որոնք երբեմն միայն հրատարակում են տեղեկութիւններ եւ ստատիստիկաներ այլ եւ այլ հարցերի մասին, բայց եւ որոնք յաճախ այնքան անճիշտ եւ սխալներով լի են լինում, որ պարսկական

իրականութեան քիչ շատ ծանօթ մարդու ծիծաղը միայն կյարուցանեն:

Գիտական եզրակացութիւններ անկցանկացողի գրութիւնը այսպէս լինելով համդիր, կփորձենք ըստ հնարաւորութեան ցոյց տալ այն նախապայմանները եւ նոցա շարժումը նպատակին հասցնելու հասունութեան աստիճանները, որոնք հիմք են ծառայել ներկայ շարժման:

Քիստ սովորական է գարձել մեզանում կրկնել շարունակ այն միտքը, թէ պարսկական շարժումները Ռուսական մեծ յեղափոխութեան անդրադարձումն են եւ իրեն ամբողջութիւն, այս շարժումները ռուսական ազգման հետեանքներն են: Ո՞րանք ճիշտ է այս կարծիքը. հնարաւոր է արդե՞ք որևէ շարժման յառաջացումը սոսկ հարեանցիական ազդումից: Տեսնենք: Ակնյայտնի ճշմարտութիւն է, որ 89 թ-նը իւր մեծ եւ հզոր ազդեցութիւնը ունեցաւ գրեթէ Եւրոպական բոլոր պետութիւնների վրայ, նոյն իսկ սառը եւ անտարբեր Նիւսիսը անշարժ չմնա՞ծ, բայց այդ շարժմանց միակ պատճառը ազգումը չէր. այդ երկրներում արդէն իսկ ամբողջութեամբ կամ մեծ շահով մտնող էին առել այն նախապայմանները, որոնք պէտք է շարժումը առաջ բերէին: Միայն թէ Ֆրանսիական արսուլիստիզմի անկումը թիւ էր տալիս միւս ժողովրդներին աւելի յանդուգն լինելու եւ արտաքին միջամտութիւնից երկրի չկրելու: Նոյնը եւ այսօր Պարսկաստանում, Յեղափոխութեան նախապայմաններն էին ոչ ամբողջովին, զոնէ մասամբ հասունացել էին շարժումը առաջ բերելու համար. Ռուսական յեղափոխութիւնը եւ իւր կողմից եկաւ իւր զօրեղ ազդեցութիւնը գործ դնելու կատարելիք շարժման վրայ՝ ամենից առաջ թուլացնելով կամ չեղօքացնելով հէնց այն միապետութեան ոյժը, որը ամենից շուտ եւ զօրեղ կերպով կարող էր օգնել Իրանի բնապետներից խեղտելու շարժումը իւր բնի մէջ: Սա անմիջական ճշմարտութիւն կարող է համարել եւ առանց սահմանադրական Ռուսաստանի երբէք գոյութիւն չի կարող ունենալ սահմանադրական Պարսկաստանը: Հետևաբար Ռուսական ազդեցութիւնը իմպուլս պատճառի դեր ունի ներկա շարժումներին մէջ: Անցնենք այժմ բուն խնդրին, որոնք են շարժման հիմնապատճառները:

Պարսկաստանը իր ներկայ հողային դրութեամբ ֆէօդալիզմի վերջին աստիճանն է օպրում: Այն գրութիւնը, թէ իրական եւ թէ անտեսական, որի մէջ գտնուում էր Ֆրանսիական գիւղացին 18-րդ դարու վերջին, յատուկ է եւ ներկայիս պարսկական գիւղացուն: իսկ որոշ սահմաններում դեռ եւ աւելի վատ

Գիւզացիութիւնը դարերից ի վեր կառավարել ֆէօդալների կթան կող է հանգիսացիլ և գերագնացորէն շահագործել է: Գրեթէ բոլոր գիւղերն և հողերն սեփականութիւն են խոշոր հողատէրերի, որպիսիք հանդիսանում են ամենից առաջ շահը հողատերականները և թէպէտ Գիւզացուն իր ամբողջ աշխատանքից չնչին մասն է մնում, այնքան բարձր և անձեռնառ ևն կապալադարձերը և այնքան շատ և բազմատեսակ պետութեան (Կրքիմն 3-ից 1-ը) և հողատերականութեան հարկերը: Հարկատուութիւնը իսկապէս ոչ թէ բերքով է, այլ փողով բայց զա աւելի ևս գածան է. դիւզային կէէ մի որոշ գումար հարկ պիտի աայ պետութեան, ապիս է ի հաշիւ այդ փողի իւր բերքի հարկաւոր Զանքով, իհարկէ հնարաւոր եղածին չափ, էժան է առնում պետութիւնից այդ բերքը: Հարկատուութեան այդ սխառմը վերջին ծայր աղքատութեան է հասցնում գիւղացիութեան, Հաղորդակցութեան լնական և անպապահով ճանապարհներով, երբեմն թաւանկով, ժողովրդի գլխին պատուհաս դարձած աւազակներից, գիւզացին իւր բերքը հասցնում է քաղաք և ի հաշիւ հարկի ապիս կալածատիրոջը:

Շատ քիչ տեղերում էլ գոյութիւն ունի մասնաւոր ծխական հողատիրութիւն, բայց այդպիսի տեղերում էլ գիւղացու հողաբաժինը Ֆրանսիական հանրածանօթ գիւզացու սթաշկինակներից գէնը չի անցնում իւր մեծութեամբ. իսկ անասնական դրութեամբ էլ այդ անասնականատէրը գիւղացին ոչնչով չի գանազանում վերջին աղքատից, Իժրախաարար գոյութիւն չունի գէթ մօտաւոր ոտատիսախկա, թէ հողերից իր մասն է պատկանում կալածատէր խաներին, որ մասն հողատերականութեանը և որ մասը գիւղացիութեան:

Յամենայն դէպս գիւղացին, այդ ինչի-իդուալիստ հողագործը, միշտ էլ կթէքրի և թերում է յեղափոխութեան կողմը, որովհետեւ յեղափոխութեան ժամանակ միայն նա առաջին անգամ կոչ է լուսւմ շտայ հարկ աւելի, քան նշանակել է ներկայացուցչական ժողովը:

Բայց թէ որքան պահանջկատ կլինի և տրամադիր կուի գիւղացին և թէ արդեօք մինչև սրմատական լուծուրը հողատիրութեան ձևի նա կկուի, այդ այժմեանից չի կարելի ասել:

Պարսկական խոշոր քաղաքները արդիւնաբերութեան մանուֆակտուրային շրջանն են թեակոխեր, Իորդի և այլ աշխատանցներում արդէն 100-աւոր և 1.000-աւոր բանւորներ են աշխատում չնչին աշխատավարձով (օրէկան 2 կոպէկից սկսած աշակերտներ և 20 կոպէկից սկսած վարպետներ):

Ինչ ևս նորածիլ բուրժուազիան ամենից աւելի շահագրգռւած է պետական կազմի փոփոխութեան մէջ: Նա է, որ ամենից աւելի շահագրգռւած է իրաւական շահերի պաշտպան հաստատութիւններ ունենալու մէջ: Ոչ մի հարուստ իւր կրեգիտի ապահովութիւնը չունի և առաւօտեան արթնանալիս ոչնչով փտանչէ, որ ինքը վերջին մաշտայիկի դրութեան մէջ չի ընկնի, թաւանկով պետութիւնից կամ մի նշանաւոր խանից: Նորածիլ բուրժուազիան իւր նորափթիթ ձեւնարկութիւններ համար հովանաւորութիւն է սպասում պետութիւնից, իսկ այդ տեսակի հովանաւորութիւն յոյս չունի վայելելու ֆէօդալ թագաւորից և հողատերական կալածատէրերից\*): Իւր գաւաակարգի ներկայացուցիչները միայն նրան կարող է պաշտպանել օտարերկրեայ արժան և լաւ ապրանքների մրցումից: խոշոր մաքսերի միջոցով և հովանաւորութիւն անել իրաւական շահերի պաշտպանութեանը: Եւ այս տեսակէտից խիստ բնական է այն բոյկօտը, որին ենթարկեցին ներկայ շարժումների հէնց սկզբից օտարերկրեայ ապրանքները: մինք տրածադիր չենք այդ քայլը յետադիմական հոշակուլու բուրժուազիան իր տիրապետութեան սկիզբըն է թեակոխում և առանց այդ տեսակի քայլերի երէէ հնարաւորութիւն չի ունենայ զարգանալու Աւելացնենք և այս պետութիւնը իր չնչին բիւզժէն չի կարողանում լրացնել պետական օպերացիաներից, առանց կողոպտելու այս կամ այն հարստին. պետութեան եկամուտները նշանաւոր աղբիւրները ցամաքել են: Ամբողջ պետութեան մաքսը անցնում է ուրա կառավարութեան ի հաշիւ պարտքի աօկոսի, իսկ փաստի և հեռագրատան եկամուտներն էլ հասնում են անգլիացիներին, դարձեալ ի հաշիւ աօկոսի: Երկաթուղային կոնցլեսիաներ տրւած են ռուսներին՝ հիւսիսային և անգլիացիներին՝ հարաւային Պարսկաստանում: Պետութեան վրին ծանրանում են ահազին պարտքեր, սկսած Regie-ի պարտքից մինչև միապետների Եւրոպա կաւարած հանապարհորդութիւնների պարտքերը և այն, իսկ դրանց վճարում է հսկայական աօկոս: Այս բոլորը խիստ լաւ տեսնում և գիտակցում են պետութեան վերջնական քայքայումը կամ կլանումը մի հարևան գորեղ պետութիւնից, տէրութեան մի քանի կրթւած

\*) Բաւական է յիշատակել մի օրինակ. մի խոշոր ձեւնարկու Քուրիզ է բերում էլիքորական լուստարութիւն. նախկին թագածաւանդը (ներկայ չահր) իւր և մերձաւորների պալատներն է լուստարում ի հաշիւ ձեւնարկուի, առանց մի կողմի վճարելու, ձեւնարկուն նման շահագրգռութեան ենթարկելով նաև մի քանի նշանաւոր խաների կողմից, վերջ ի վերջոյ մնանկաջաւ:

(արտատահմանում) անհատները, որոնք սահմանադրական կառավարութեան պաշտպաններն են, հասկանալով որ միայն վերածնած Պարսկաստանը կարող է բարգաւաճել և զարգանալ և որ Ֆէօզալ Պարսկաստանը երկար չի կարող իւր անհախ գոյութիւնը պահպանել:

Պետութեան կառավարիչները, մինխաբրները, նահանգապետները և այլն առանց բացառութեան անկիրթ, ազեւտ անհատներ են, որոնք մինչև վերջ գրադած են զանազան պաշտօններ գնելով և վաճառելով և որոնք շատ իրենց փորերը պարարտացնելու և զրգանները լեցնելու մասին են մտածում, քան տէրութեան բարեկարգութեան մասին: Ուրիշ կերպ վարել էլ չեն կարող. ահաւասիկ արեւի մի հարուստ արջակից իրենց պաշտօնի համար կենդանացնել մի կլորիկ զուճար միապետին կամ մինխաբրին և իրենք զարձեւալ կմնան անպաշտօն: Հողերակամները և կառավարիչները դէժ կլինեն յասկապէս մի կրթած մարդու պաշտօն տալուն, որովհետև այդպիսով զուցէ իրենց երանելի տիրապետութեան հիմքերը խախտեն:

Պետութիւնը թէ անտեսապէս և թէ զիւլումաւորական յարաբերութիւնների տեսակէտից խողոր նգնաժամի մէջ է և անխուսափելիորէն քայքայման պրօցեսում է. և այդ պատճառով ահա վերոյիշեալ գլուխներն են ստիպել պարսկական դեմօկրատիային\*) անցնել սահմանադրութեան կողմը, որովհետև սահմանադրական և իրաւական հաստատութիւնները միայն կարող են փրկել Պարսկաստանը իւր ներկայ եզնաժամից:

Իսկ թէ որքան յաջողութիւն կգանի այդ շարժումը, կտեսնք յաջորդ անգամ:

II. Յովաննիսիանց

**Մ Ա Մ Ո Ւ Լ**

Հնչակեան—ամօթ չըլինի ասել—կուսակցութեան զեկավարներից մէկը, պ. Սապահ—Փիւլիան, մի տեսակցութեան մէջ հաղորդել է Voss. Zeit.-ի աշխատակցին հետեւեալ տեղեկութիւնները իր կուսակցութեան մասին:

«Հնչակեան կուսակցութիւնը մարքսիտական է և պէտք է ձգտի կազմա-

կերպելու Օտտօմանեան երկրի բոլոր բանւորներին: Այդ կազմակերպութեան գլուխ պիտի անցնի Կ. Պօլսի կօմիտէն, որտեղ կրմանեն բոլոր սօցիալիստական կազմակերպութիւնների ներկայացուցիչները»:

«Մենք շատ ուժեղ ենք—ասել է նա—մեր կազմակերպութեան մէջ Կովկասում 50,000 զիտակից բանւորութիւն կայ: Մենք ուսաց յեղափոխութիւնը սկսել ենք Բազում 1905 թ. Մօսկուայի և Պետերբուրգի դէպքերից 12 օր առաջ»:

Ինչպէս տեսնում էք, այս ստեղծկութիւններին իւրաքանչիւր խօսքը միտաւորի սուտ է, որին ընդունակ կարող է լինել հայ ժողովրդի տականքներից կազմած զուսակցութեան» լիզէրը միայն:

Նրանք, որոնք ծանօթ են այդ հնչակեանների հասարակական կերպարանքին, գիտեն, որ նրանց կուսակցութիւնը նոյնքան աննշտութիւն ունի մարքսիզմի հետ, որքան նացիօնալ-դեմօկրատիան աշխատաւորական թէօրիայի հետ, որ նրանք Անդրկովկասում 50,000 կասկածելի տիպեր և ոչ թէ զիտակից բանւորներ կարող են ունենալ, որ առական յեղափոխութեան մէջ նրանք նոյնքան են մասնակցել, որքան նացիօնալ-դեմօկրատիան: Սակայն նրանք, որոնք գիտեն այդ ամենը, պիտի շափազանց զարմանան, երբ իմանան, որ հնչակեան ստախօտութեան դէժ բողոքում է «Հանգակի» մէջ անաղոյ վարժութիւններ անող պ. Վ.—ն: Այս մարդը, ինչպէս յայտնի է, պատկանում է այն հասարակական խմբակցութեան, որի ներկայացուցիչներից մէկը՝ պ. Վահէն, յայտարարել է ի լուր հայ հասարակութեան, որ նացիօնալ-դեմօկրատիան 6—7000 կազմակերպւած բանւորներ ունի նախաշխարհում (տես «Անջատւածներսերիս 14»), որի պաշտօնական զեկուցագիրը հաւատացրել է եւրօպական միամիտ սօցիալիստներին, որ նոյն կազմակերպութիւնը 165,000 զիտակից աշխատաւորներ ունի հայոց ազգի մէջ, որ այս վերջինս մասնակցել է յեղափոխական գործին և այլն:

Յամենայն դէպս պ. Վ.—ն չէ այն անձնաւորութիւնը, որն իրաւունք ունի բողոքելու յեղափոխական շանտաժի դէժ, որովհետև այս վերջինս տեսակետով Վահէն արժէ Սապահ—Փիւլիանին և Սապահ—Փիւլիանը արժէ Վահէնին:

\*) Ի դէպ ստենք, որ հասցիին ևս իր գրած մի մասնուոր նամակում ներկայ շարժումը իւր ամբողջութեամբ համարում է զեմօկրատական:

**ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ**

**ՆԱԽԱԳԻՍՈՐԶ**

**Բ Ա Լ Ա Խ Ա Ն Ի**

24-ին օգոստոսի:

Տէր Յակոբեանի նախաձեռնությամբ զբա- սնեցուցուած ծառայում է կանաւորչիկի օգնու- կան մի սկի Յ. Պետրոսեանը, որին յանձնուած է հիւանդանոց գնացող բանւորներին այցե- տումներ տալը: Այդ պարոնը, որ երկու տա- րի առաջ անլիւֆօնչիկի պաշտօնումն էր և գտնուում էր Նոյն բանւորների շարքում, այժմ բախտի բերմամբ ընկել է աղմինիսարացիայի շարքը և—զարձել բանւորների համար մի հրէջ:

Ամեն մի հիւանդ բանւոր նրանից այցե- տոմս ստանալու համար ստիպւած է մի քա- նի ժամերով սպասել, մինչև որ պարոնը կը- բարեհաճի այցետոմս տալու, այն էլ անմար- դավայի կերպով: Եղի են շատ դէպքեր, որ հիւանդ բանւորին յետ է դարձրել: Եվսր կգաս, այսօր ժամանակ չունեն, ասելով, —Քէ- կուզ հիւանդը իրտ կարիք է դգացել նայն օրը հիւանդանոց գնալու: Նախադիւնարե- բողների խորհուրդի որոշման հիման վերայ, ամեն մի հիւանդանոց գնացող բանւոր ստա- նում է նաև մի տասը կողեկանոց անդորրա- գիւր ֆիրմայից: Նոյնը ստանում են և Տէր Յակոբեանի բանւորները: Բայց շատ քիչ է պատահում, որ առանց մի որ և է դալմազայի շաղկուում է ստանալու յիշեալ կանաւորչիկի օգնականից այդ անդորրագրերը: Ներկայանա- լով օրպէս ջերմ պաշտպան կապիտալիստի, առարկում է, որ բանւորները հիւանդ չեն, այլ խարէութեամբ ստանում են անգործագրե- րը և մասնաւոր մարդկանց վերայ ծախում: Այժմ էլ սկսել է գաղտնի ոտտիկանի դիր կա- տարել: Մտնում է բանւորների մէջ տեղեկու- թիւններ հաւաքելու այս կամ այն բանւորի հիւանդ լինելու մասին: Իսկ երբ հիւանդ բանւորը պահանջում է հաստատելու իւր վե- բայ բարթեւած մեղադրանքը, նա պրօվակատօ- րի դերի մէջ ժաած հաւատացնում է, որ ի- բան այս ինչ բանւորն է հաղորդել և այսպի- սով լարում է բանւորին բանւորի դէմ:

Նման օրինակ մի դէպք պատահեց մի արհեստաւորի հետ, որը հիւանդ լինելով մի քանի օր շարունակ թուղթ էր քերում մինա- նիկից և այցետոմս ստանում հիւանդանոց գնալու: Ամսոյս 22-ին պ. Պետրոսեանը մտնում է արհեստանոցը տեղեկութիւններ հաւաքելու:

հիւանդ արհեստաւորի մասին Այս քանը նը- կատելով, միտանիկը զգուշացնում է նրան, որ այնա չհամարձակի տալպիսի ստոր դի- տաւորութեամբ մանելու արհեստանոցը, քա- նի որ ինքն է հիւանդին թուղթ տալիս և ու- դարկում գրասենեակը: Այդ լուրը ստանալով, հիւանդ արհեստաւորը իրան վիրաւորած զգալով, գրաւոր կերպով պահանջում է ընկե- բական դատ, քայց Պ. մերժելով դատը, գրա-ւոր պատասխանում է, որ իրան այդ քանում հաւատացրել է մի արհեստաւոր (օելօնչիկի). երբ արհեստաւորի և օելօնչիկի մէջ բացա- տրութիւն է տեղի ունենում, պարզում է, որ պրօվակացիա է: Բոլոր արհեստաւորները վրը- դովում Պ. այդ ստոր քայլից, ընդհանուր ժո- դով են կայացնում, ընտրելով երեք հոգու այդ բանը ընենելու համար: Քննութեան ար- դիւնքը լինում է այն, որ կանաւորչիկի օգ- նականը իրան մեղաւոր հանաչելով, ներողու- թիւն է խնդրում ընդհանուրից և խոստանում այսուհետև այդպիսի միջոցներ չդիմել:

Բայց խոստումը և ներողութիւնը լինում է բոպէական, որովհետև Պ. աւելի ևս սկսել է շարունակել իւր գործնէութիւնը բանւորու- թեան դէմ:

Ձիւանդիբցի

27 օգոստոսի

Չնայած, որ մի քանի անգամ դրել է բանւորների մէջ գոյութիւն ունեցող կործա- նիչ թղթախաղի մասին. չնայած, որ այդ բանւորները, բացի իրենց կաշի վրա զգա- լուց, լսել են և լրագիրների ու գիտակից ընկերների բացատրութիւնները թղթախաղի իրենց հասցրած հարւածը և բոլոր փասա- կարութիւնը, դժբախտաբար դեռ ձեռք չեն վերցնում իրենց դէպի անդունդը առաջ- նորոգ այդ գործողութիւնից: Օրինակ «Տէր- Ակոբեան» 57-օրդ նախահանքի հանրակա- ցարանը կատարեալ կուր է գարձել, միայն մի փոքր զանազանութեամբ, որ այնտեղ կա- բիւրներ է ժառ գալիս, իսկ այստեղ թուան- ներ: Թղթախաղը այն աստիճան գրաւել է բանւորների ուշադրութիւնը, որ նրանք հա- մարեա թէ բթացել են և բացի թղթից ուրիշ ոչնչի վրա չեն մտածում: Ղևնդ անունով մէկ բանւոր, պաշտօնով մալիօնչիկ, այնքան է տարւած լինում, որ մինչև անգամ մոռա- նում է իր հերթապահութեան ժամանակը. իսկ մնացած բանւորները փոխանակ կուելու այդ շարիքի դէմ, հետաքրքրութեամբ նայում են և կամաց կամաց իրանք էլ վարակում գրանով:

Ո՛ւր են զիտակից բանւորները, ինչեւ են լսել, արդեօք ամօթ են համարում հրապարակ հանել բանւորների պակասութիւնները, թէ չքացիլ են նրանք: Բայց չէ որ ամեն քայլում պատահում ենք նրանց բանւորների անունից խտտիտ: Այսօր կապիտալիստները իրենց ուժեղ զգալով, օգտւելով բանւորներին անկազմակերպ դրութիւնից, ամեն բողբ անասելի ճնշումներից բացի, խմբերով գուրո են շարժում մեր ընկերներին, իսկ մեր բանւորների մէջ կազմակերպւելու ցանկութիւնը մեռած է, արհեստակցական միութեան և կօօպերացիայի մէջ կողակներով կազմակերպւելու համար «փող չունենք» առարկող բանւորները, թղթախաղի մէջ տասնեակներով մանէթներ են վառնում:

Ամեն մի բանւորի սուրբ պարտականութիւնն է բողոքել դրա դէմ, թող նրանցից ոչ մէկը կանգ չառնի այդ խաղացողների շարքից: Ի՞նչ փողոս են ամենի տալիս առարկութեան դէմ, որովհետեւ այդ առարկութիւնը ճիշտ չէ և դրանից փաստւում ենք ամենս անխաղի:

Բացակայ

ԲԻՅՈՒՆԻՅԵՐ

◆ Կատարեան քնն. նախնային, Յունիսի 11-ից բացել է մեզ մօտ սպառողական խանութը, որը այժմ շարունակում է պահպանել իրա կանոնաւոր գոյութիւնը: Այն բանւորները, որոնք սկզբում թերահաւատ էին վերաբերում դէպի այդ խանութը, այժմ տեսնելով նրա հետեանքները, քիչ քիչ անդամագրւում են այնտեղ: Բանւորութիւնը շնորհիւ սպառողական խանութի, ազատւած է կեղծիչ խանութանների նախկինից: Մակայն բանւորութեան մէջ դեռ չի կարելի ասել, որ սպառողական միութեան գաղափարը արդէն ամրացած է: Կան մօթ նպատակներով արաջնորդողներ, որոնք կամենում են շահագործել յօգուտ իրենց սեփական գրպանի, սպառողական խանութը: Շատերն էլ շանդամագրւելով միութեան մէջ, յետին նպատակներով կամենում են դրսից քայքայել սկսած գործը:

Միայն բանւորութեան միահամուռ անկեղծ աջակցութիւնն կարող է յարատեւել և ծաղկման հասցնել սկսած գործը, իսկ բանւորութեան թշնամի անհամները, որոնք ամեն ինչ յօգուտ սեփական շահերի դիտեն ծառայեցնել, պիտի հեռու մնան այդ հիմնարկութիւնից:

◆ Մանթաշանի նախնային: Բարձր ազմինիստացիան, ինչպէս ամեն տեղ, այնպէս էլ նաեւ մեզ մօտ, ուժգին կերպով զննում է բանւորութեան շահերի դէմ: Ամենից շատ աչքի է ընկնում պ. Զանբուլաթեանցը, որը դեռ սնցիւալ տարի կառավարչի օգնական գառնալով այս նախնայինը, յայտարարեց, որ պիտի դիւրորական դիպրիպրինա մայրի նախնայինը: Մի սօս ժամանակ անցնելուց յետոյ, սկսեց մէկ մէկ հեռացնել գիտակից բանւորներին: Բանւորութիւնը նկատելով այդ քաղաքականութիւնը, ընդհարումը ժողով գումարից, որանց որոշեց՝ քօչկօտի ենթարկել պ. Զանբուլաթեանցին, սակայն այդ որոշումը չիրականացաւ գանազան մօթ անձնաւորութիւնների շնորհիւ, որոնք ամեն կերպ կամենում էին և կամենում են ոսնահարել բանւոր ժողովրդի իրաւունքները:

Բանւոր կօտաչօ

Ք Ա Ղ Ա Ք

«ԳԻՏԱԿԻՑ» ԲԱՆԻՈՐՆԵՐԸ

Հետաքրքրական է ծանօթանալ տպարանական բանւորները գործունէութեան հետ, նամանաւանդ, որ իրենց օգիտակիցներու են յայտարարել և կարտատում են, իրենց բազուայ բանւորների տաղապահը կարծելով: Բաւական չէ, որ նրանք կազմակերպւած են ու համեմատաբար ուրիշ միութիւնների հետ պատկառելի տեղ են բռնում: Բաւական չէ, որ տպարանական բանւորները առանց Բիւրօի համաձայնութեան իւր կամեցած տեղը ու իւր ցանկացած ոսծիկով աշխատելու իրաւունքը չունին:

Տեսնենք թէ ինչպէս են վերաբերում դէպի իրենց միակ բանւորական հաստատութիւնը—արհեստակցական միութիւնը: Լինելով տպարանական բանւոր, ներկայ եմ եղել միութեան կողմից հրաւիրւած մի քանի ընդհանուր ժողովների, որտեղ սպասում էի տեսնել առնւազը 200-250 բանւոր (բոլոր անդամների թիւը հասնում է մօտաւորապէս 400—450), այն ինչ նրանց թիւը 100-ից չէր անցնում: Միութիւնը ստիպւած երկրորդ ընդհանուր ժողովն է հրաւիրում և նոյնը կրկնւում է: Ի հարկէ, եթէ երրորդ ու չորրորդ անգամն էլ հրաւիրւելին, պարծեալ միեւնոյնը պիտի լինէր: Եւ միութեան վարչութիւնը կանօնադրի 5-րդ յօդուածի համաձայն ստիպւած, օրինաւոր է համարում այդպիսի սակաւաթիւ ժողովը, ուր օրակարգի մէջ նշանակւած է



այնպիսի կարևոր խնդիր, ինչպիսին է նոր վարչութեան ընտրութիւնը: Ժողովը որոշում է յրել ապարանների ներկայացուցիչների ձևաքով 25 անուններից քաղկացած թիկնածուների ցանկը, որպէսզի ամեն մի բանւոր այդ ցուցակից ընտրի 31 հոգի և թերթիկները ուղարկէ միութեան քիւրծն ընտրութիւնը կատարելու համար:

Ես ակահատէս էի, թէ ինչպէս էին մի ապարանում ընտրում թիկնածուների ցանկից նոր վարչութեան անդամներ: Մտեցայ բանւորներից մէկին ու հարցրի:

— Ո՞վ է այդ առաջինը, որ նշանակւոյլը հանաչեւ հա:

— Ընկերս է ճանաչում, շատ լաւ տղա է, ինքը լուրջ, գործունեաւ: Բայց կան անծանօթ ներս էլ:

— Հապա ինչպէ՞ս պէտք է ընտրես:

— Ընկերս հանաչում է:

Իարձայ նրա ընկերոջը ու հարցրի:

— Այս ինչ մարդուն (ցուցակից) հանաչում ես:

— Ո՞չ:

Եւ այդպէս շատ շատերը Յուցակը, ինարկէ, լրացւում է և ուղարկւում քիւրծին:

Եւ ամբողջ տարին բոլոր այդ բանւորներից շատերը ոչ հեռաքրքրում են միութեան գործերով, ոչ նրա գրութիւնով, ոչ նրա բարելաւման գործով: Գործ կատարող փոքրամասնութիւնը կատարում է իւր գործը, իսկ «գիտակից» մեծամասնութիւնը սպասում է միւս անգամէն, որ ընտրութիւններ նշանակեն և ինքն էլ իրեն շահախաճանակցութեամբ նոր վարչութիւն ընտրի:

Մտնք ապարանական բանւորներն են, որոնք առանց բացառութեան զրազեանելու ինքաց քնչ պէտք է սպասել այն բանւորներից, որոնք անզրազետ լինելով, ազիտութեան մէջ խարխափում են:

Մուխ.

**ՊԷՏՅ Է ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ**

Վաղուց է, որ միտք է յղացել քաղաքում բացել «Աշխատանք» (Տրուդ) սպարտական ընկերութեան բաժանմունքը: Այդ ուզուլութեամբ բանակցութիւններ են տեղի ունեցել, գլխաւոր վարչութեան հետ, մարդիկ են նշանակել, որոնց մօտ կարելի է անդամագրել: Ոակախ մինչև որս ոչ մի զբաղան հետեւանքների չեն հասել: Ի՞նչ է պատճառը:

Թերեւ այն հանգամանքը, որ այդ ուղղութեամբ բանաւոր պրօպագանդ շատ քիչ է մղել տեղական գործակաւարների, գրասեն-

եակային ծառայողների ու գանազան արհեստաւորների ու բանւորների մէջ զգալի նշաւ նակութիւն է ունեցել գործերի դանդաղ ընթանալու վրայ: Բայց կա և մի աւելի ուշագրաւ հանգամանք, որին ամենամեծ նշանակութիւն պէտք է տալ. դա այն է, որ քաղաքում ցրիւ ցրիւ են աշխատուժայր կամ այն խանութում, այս կամ այն արհեստանոցում, դրասենեակում և այլն: Նրանք հնարաւորութիւն չունեն իրենց առօրեայ կեանքում շփուլն ունենալու մէկ մէկու հետ, իսկ այդ հանկամանքը կարևոր է: Սակայն այդ բոլորը չէ նշանակում թէ այստեղ անհնարին է այդ ուղղութեամբ գործ կատարելու: Աւելի գիտակից ու աւելի այդ պակասը գիտակցողները պէտք է իրենց վերա վերցնեն ծանրութիւնը կազմակերպելու դասախօսութիւններ կօպեցիալ գաղափարը աւելի լայն մասններին ժառնչի դարձնելու համար, շրջն պիտի խարնութից խանութ արհեստանոցից արհեստանոց անդամներ գտնելու համար ու անդամագրւածների հետ յաջիս ժողովներ պւումարել, ակտիւ գործ կատարողների շրջանակը աւելի լայնացնելու համար: Կարծում ենք, որ այսպիսով միայն կարելի կլինի իրագործել այն, որը մեզ բոլորիս ցանկութիւնն է և որը մինչև այսօր չէ իրականացիլ:

Բազէ

**«ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ»**  
I.

«Անիւս-ի Ք 16-ում կարգացի ընկ. Զարմայրի յողւածը, մեր բուրժուաների խըմբակի շեղու. Միութ.» կոչւած խղճուկ հիմնարկութեան մասին ուր պարզ ապացուցում է, որ այդ և նման օրարենապատակս «ազգը փրկող» և այն գեղեցիկ դիմակներով ծածկւած միութիւնների իսկական էութիւնն ու գիմակը:

Ժամանակակից աննորմալ պայմանների շնորհիւ իրանց գոյութիւնը պաշտպանող ու բուրժուաների դիմակ ծածկող այդ խմբակների արժանաւոր գնահատումը թողնելով աւելի ձեռնհաս անձանց, սորանով զարխս եմ արձանադրելու մի փաստ ևս այդ խմբակի («Կ. Մ.») «կուլտուրական» շքաշապարտութիւններից», որով մի աւելորդ անգամ ևս պարզւած կլինի այդ ու նման ընկերութիւնների՝ քարիգործութիւն բառի տակ թաղուած իսկական գիմակն ու սաստալը...

1817-19 թ. սէզմին ինչպէս յայանի է, «Կ. Մ.» թատրոնական սէկցիան պահում էր տեղումս զերասանական խումբը: Աէզմնը վերջանալու վրա էր:

Ամբողջ ձմեռւս ընթացքում դերակա-  
տարնէրը իրենց սոճիկ զոչւած խղճուկ ու  
զորմութիւնից կուով, աղմուկով են ամուս  
ամեն անգամ 1—3 բուբլիներով: Աէզոնի վեր-  
ջին մի քանիսը շերտի զոչովս դուրս են  
կորզում աղաների ծեղքից իրանց հասան-  
ելիքները և գնում, իսկ մի քանի «խեղճերը»  
հաւատարմով կուլտուրական պարոնների խոս-  
տուկներին, սպասում են երկար ամիսներ:

Իսկ մի քանիսն էլ «թքում այդպիսի  
ստանալիքի վերայ» և գնում:

«Կուլտուրականի» այդ զոչերից մէկի  
հետ ես մի սննեակում էի պարում:

Օրէրը մտածում Չատկին երկար սպա-  
սելուց յուսահատուած ընկերս Ա-ն վերցրեց  
իւր բախտակից Թ-ին ու գնացին միութեան  
նախագահի, պ. Թ-եանի մօտ:

Շատ չանցած նրանք հետ եկան գլխիկոր  
ու յուսահատ... Թ-եանից իրենց արդար  
վատակը պահանջելուց, պարոնը պատասխ-  
անում է—

—«Ուր ուզում էք դիմէք, չեմ տալու:  
Այնպէս կարծեցիք, որ ես փողը աւի, իսկ  
գրպանահատները ձեր գրպանից հանեցին\*»...»  
Իզուր է անցնում նրանց աղաչանք—պազա-  
տանքը. պ.-ը իւր աօածին վրա կանգնում է:

Թ—եանը գնաց իրեն տուճը, իսկ ըն-  
կերս ընկնելով մահճակալի վրայ լաց եղաւ...

Անգործ միակ ղէնքը...  
Չատկի օրն էր:

Ի՞մ սեփնական միջոցները ևս սպասել էր  
և երեկւանից ոչինչ չէինք կերել...

Առուտուանից այս ու այն կողմը ըն-  
կայ փող գտնելու, չյաջողւեց. եկայ առն, ու  
պառակցի իմ մահճակալիս վերայ, աշխատե-  
լով քնով մոռանալ ամեն ինչ... Աչքերս նոր  
էին փակել երբ վեր թռայ, սննեակում լուսոյ  
ինչ որ ազմուկից, Բարձրացայ, ու սարսափից  
քարացայ...

Ընկերս թոյն էր ընդունել...

Հուում հնչում էր եկեղեցու զանգի զո-  
ղանջիւնը այն բուպէին, երբ «աղբը փրկող» պ.  
Թ-եան իրա փառահեղ դասլիճներում ձոխ սե-  
ղանի շուրջը ամուս էր... Գրիստոսի տանը:  
Այսպեղ ընկերս իրա ձեռքով թունաւորուած  
զալարում էր մահւան ճիրաններում...

Լեղապատառ ներս թափւեցին հարեանե-  
ները, գրինք կառք, և տարանք հիւանդանոց:  
Շնորհիւ մեր շուտափոյթ օգնութեան նա ա-  
ռողջացաւ ու վաճառելով իւր աւելորդ շորերը  
ճանապարհ ընկաւ Տ. և մինչև այժմ էլ նա  
չէ ստացել իրա հասանելիքը: Ե. Տ.—նի

\*) Կատարել է թէ վերջում ով եղաւ «գրպա-  
նահատը»

Կ Ո Վ Կ Ա Ս

→ Վերջին տարիների անտեսական քայ-  
քայման հետ միասին մնանորեսկ գիւլի (Չան.  
պաւառ) տոնուտերերն ու դատաւորները ի-  
րենց կաշառակեր սովորութիւններով, գիւղա-  
ցոց մտածում են սոսկալի սովի Գիւղացի-  
ները հողից յոյսները կտրած իրենց յոյսը  
դրել են ուրիշ քաղաքներում ապրող համա-  
գիւղացիների վրա, կարծելով թէ միակ  
փրկութեան ճանապարհը դրսից կարող է չի-  
նել: Նրանք զանազան իւղբաշինների ոտնձու-  
թւնների առջ իրենց անգոր զգալով, պաշա-  
պանութիւն են սրունում դրսից, սակայն պետի  
իմանան, որ ոչ մի դրսի ոյժ չի կարող այն  
անել, ինչ որ սեփական, կազմակերպւած ոյժը:  
Բողբոջ

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Բ

Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր Գ Ի Ի Ղ Ի Յ

II.

Վարանդա 16-ին սգոտոսի  
Խոստումներ շատ աւելն վարանդացուն և  
նրանք միայն խոստումներ մնացին այնպէս,  
ինչպէս շատ բաներ միայն թղթի վրա մնացին:  
Մի ժամանակ Վարանդան, իսկ նրա հետ միա-  
սին դաշնակցական աշխարհը դրդում էր  
հանրահռչակ «Վարանդայի ինտելիգենտներին»  
գործունէութիւնից: Այդ ինտելիգենտների ժո-  
ղովները, որ պարբերաբար տեղի ունեցան մի  
քանի անգամ, ի միջի այլոց առաջադրել էին  
մի չափազանց կարևոր ինդիք, այն է, Թունա-  
շէնի և Ամարասի առուտահող ձորերում հիմ-  
նել 2 մեծ գիւղեր: Այդ մտադրութիւնը առա-  
ջացել էր հետեւեալ նպատակով: Վարանդայում  
ամենաբերրի հողերը այդ երկու վայրերումն  
են գտնուում: Նրանք այնքան մեծ և բերրի  
են, ու մինչև հայ—թրքական ընդհարումները  
բացի ամբողջ Վարանդան կերակրելուց, հնա-  
բաւորութիւն էին տալիս գիւղացուն բերքի  
մի որոշ մասը արտահանել վաճառելու: Գլու-  
նելով իրենց աշխարհագրական գիւղով թրք-  
ական սահմանին կից, իսկ հողերին տիրապե-  
տող հայ գիւղերից տանեակ վերստեր հետու,  
այդ հողերը հայ-թրքական ընդհարումների  
ժամանակ մնացին առանց շահագործելու: Վա-  
րանդային այդ ժամանակաշրջանում գրկեց  
իրա եկամուտի միակ և ամենատուժեղ աղբիւ-  
րից և միայն այս տարի հնարաւորութիւն է  
ունեցել վարելու այդ հողերը: Ահա այդ հան-  
գամանքը մի կողմից, միւս կողմից էլ հողից

հետև լինելը, արգելք են հանդիսացել և հանդիսանում են առաջի օգտակար դարձնելուն նրանց և այդ հանգամանքները ի նկատի առնելով վարանդայի ինտելիգենցիան, որ կազմած էր համարեա թէ բացառապէս այդ շրջանի ուսուցիչներէր, որոնց՝ ինչ գնով էլ լինի, առաջ ժողի այդ երկու գիւղեր հիմնելու գաղափարը Ընտրուեց յանձնաժողով, որտեղ մտան անդամներ, գիտաւորապէս տեղական ինտելիգենտ ոյժերից, որոնք սակայն միայն ընտրուեցին, իսկ խնդիրը մինչև այսօր էլ մտած է քնած: Գործի սկզբնական շրջանում նկատելի էր եռանդ ու ոգևորութիւն, սակայն այդ ամենը կարծես կապած էր որոշ անհասանելի հետ: Ինչ ինչ պատճառներով, այդ անհասանելիքը հնարաւորութիւն չունէին մնալու այս վայրում և նրանց չքանալուն պէս, օրւայ խնդիրն էլ չքացաւ ասպարէզից: Իսկ սկսածը շարունակող չեղաւ: Չեղաւ, որովհետև մասսան, այն գիւղացիութիւնը, որ գիւղ հիմնողը, ապրողն ու հողը հերկողը պիտի լինէր, նա չէր մասնակցում ժողովներին, ուրեմն և չէր զգում գործի անհրաժեշտութիւնը:

Այդպիսով այն, որ մի ժամանակ իսկապէս փառաւոր ապագայ էր խոստանում վարանդայի գիւղացիութեանը, այսօր հերթական խնդիրներից հանած է, իսկ գիւղացիութեան լուծիւնը թոյլ է տալիս մեզ մտածելու, որ նա կարծես թէ վերջնականապէս զրկել է կենսառնակութիւնից, նեւաւելով միանգամից ապիստութեան, անգիտակցութեան գիրկը:

Շնորհիւ այդ ապիստութեան, այսօր Ամարաս և Թոնաշէն ձորերի հսկայական բերրի հողի միայն մի շնչին մասն է վարւում, իսկ նրա անազին մասը մտած է առանց մշակութեան: Մի կողմից էլ այդ անյաջողութիւնների պատճառները պէտք է որոնել վարանդայի բէկերի մէջ, օրոնք այդ հողերի մի մասի վրա տիրապետում են և իրենց անձնական շահերը բարւոքելու համար արգելք են հանդիսանում աշխատաւոր գիւղացիութեան բոլոր անհրաժեշտ կարիքներին:

Գիւղացիութիւնը սակայն այդ ևս չի տեսնում: Նա այդ բէկերի հետ գեռ սերտ յարաբերութիւնների մէջ է և իրա փրկութիւնն ու ապահովութիւնը նրանց հովանաւորութեան մէջ է գտնում:

Ազգային ամբողջութիւնը անխախտելի է այստեղ, իսկ խախտելու համար ժամանակ է հարկւուոր:

**Սերմացան**

**Բէկը**

Վարդապետ, 18-ին յուլիսի

Բէկի ռանձպութիւնները չափազանցութեան են հասել:

Բէկը գիւղական աշխարհում, եթէ չափազանցութեան չհասցնենք, փոխ թաղաւորն է գիւղացու համար, իբրև այդպիսին:

Այս բանը կարող են հաստատել իբրև փաստ նրանք, որոնք ապրել են այդ դժոխք իրականութեան մէջ, այդ ոչ ցանկալի բէկի հողատիրութեան մէջ, որը կոչւում է այսպէս սասած օրէկական:

Մեր գիւղը բաղկացած է մօտաւորապէս եթէ ոչ աւելի 230-250 տնից:

Գիւղի հասարակութիւնը բաղկացած է ըստ աշխատանքի կրկու մասից, այն է՝ մի մասը (փոքրամասնութիւնը) պարապոււմ է հողագործութեամբ, իսկ միւս մասը (մեծամասնութիւնը) քարտաշութեամբ և նաւթաշխարհում զանազան արհեստով է պարապում: Մեր խօսքը աշխատաւոր գիւղացիութեան մասին պէտք է լինի, իսկ արհեստաւորութեան մասին մի այլ անգամ:

Եթէ չըչափազանցենք, պիտի սսեմ, որ այդ 230-250 տնեցիք բոլորը հողագործութեամբ են պարապում, եթէ իբրևք չեն վարում, գոնէ ուրիշին փողով վարել են տալիս: Բացառութիւնների մասին խօսք չի կարող լինել:

Առելի պարզենք խնդիրը:

Մեր գիւղի վարելահողերը (նաջափ կուլի խանի, որովհետև ուրիշ բէկի էլ հող ունենք) մօտաւորապէս 800 դեսեաւին են, որովհետև գիւղացիները այնքան էլ հողագործութեամբ չեն պարապում:

Տարին հաշուով միջակ, մեր գիւղացիները ստանում են հողագործութիւնից ցորեն—1500 չաւ (չաւը 7 փութ է) զարի—500,—կորեկ 200-300 չաւ, թւերը մօտաւորապէս է բերւած:

Ըստ հողագործութեան և դասակարգի հետևեալ կերպով է բաժանւում:

Ունեւոր դասակարգը, որ գիւղի 50%-ը է կազմում, ստանում է հողագործութիւնից 30%-ը:

Միջին դասակարգը որ կազմում է 45% ստանում է մօտաւորապէս 35%:

Իսկ ազքատ դասակարգը, որ կազմում է գիւղի 50%-ը, ստանում է հազիւ 15%-ը:

Ունեւոր դասակարգի շարքն են դասւում քովխանները տանուէրերը, տէրաէրները և մի շարք այդպիսի աղստիկայներ:

Միջին դասակարգի շարքն է դասւում

այն մասսան, որը այսպէս ասած գիշեր ցե-  
րեկ աշխատում է և իրան չի կառավարում,  
ինչպէս ասում են, որը անում է, որը ուտում,  
խոն գիւղական այն մասսան, որ կազմում է  
գիւղի 50%-ը, ամենաչքաւոր դասակարգն  
է, որ գիշեր ցերեկ աշխատում է, բայց կրկին  
Ֆնում է սոված, քնում է պարտքի մէջ խրած,  
քնում է տարիներով միւ բնարաթն, որը  
սարսալ մեծ մասը այգիներում, անտառ-  
ներում է քնում, որը իր երեխաների հետ,  
հազիւ է պատահում որ նաչի նստի, որը նոր  
հպուստի երես չի տեսնում, ահա այդպիսի-  
ներն են, որ ստանում են միմիայն 15%-ը  
հողագործութիւնից:

Բազաբումը սեփականագութիւն բանւորն է  
գիշեր ցերեկ աշխատում կեղեքող կապիտա-  
լիստի համար, կրկին Ֆնում սոված ծարաւ  
փողոցները թափառելիս, խոն փարթամ կապի-  
տալիստը զանազան անբարոյական սալոննե-  
րում, բանւորից կեղեքած միլիոնները փը-  
շացնում:

Գիւղական աշխարհում նոյնպէս եթէ ոչ  
սեփականագութիւն, բայց օգտուելու իրաւունքից  
զրկւած, կրկին սոված, ծարաւ մասսան  
է միակտում:

Պատկերը միևնոյն է:  
Այժմ վերադանանք մեր խնդրին:  
Բէկը բոլոր բերքերից ստանում է  
տուրք, որը կոչւում է տասանորդ (10-ից  
մէկը):

Մասնացոյց անծնք այն բերքերը, որից  
բէկը տուրք է ստանում, այն է՝ ցորենից, գա-  
բուց, կորեկից, խաղողից, թուխից, կեռասից  
և մի շարք մրգերից, հաշուով ապրանքը  
փող, ցորենից, գարուց, կորեկից, —2400 բուբ-  
լի ամենապակասը տարեկան. խաղողից, թը-  
խից 1000 —բուբլի, կեռասից և մանր-մունք  
մրգերից 200 —բուբլի:

Այսպիսով բէկը ամեն տարի, միայն  
մեր գիւղից վերցնում է 3600 բուբլի իբրև  
տասանորդ:

Բայց որովհետև բէկը տասանորդը հողե-  
րից չի ստանում, այլ հողից եկած բերքից,  
այդ պատճառով նա իր կողմից այսպէս  
ասած «ղարդա» է նշանակում իր աղղակից-  
ներից (թուրք) և մէկ հայ էլ գիւղից, (որը իր  
կողմն է պաշտպանում) որպէսզի գնահատման  
ժամանակը չխարեն գիւղացիները դարդին:

Բայց դեռ այդ բաւական չէ ձրիակիր  
բէկի կողմից, նա թոյլ չի տալիս դարտերի  
հնածո հունձը բերեն կալսին, մինչև որ սարին  
էլ կեննեն (սարինը քիչ ուշ է հասնում): Գիւ-  
ղացին ստիպւած է սպասել, մինչև սարի հուն-  
ձը հնձելը, որովհետև բէկը երկու անգամ նն-  
դութիւն չի քաշում համբելու խուրձերը, որի

հետեանքը լինում է այն, որ խուրձերը դաշ-  
տերից զուգանում են:

Այսպիսով կրկնապատիկ քնուում է աշ-  
խատաւոր գիւղացին, որովհետև նա ստիպւած  
է վճարել և գուպացածի տասանորդը:

Պատկերը ասելի հատարեալ պարմանու  
համար արժէ յիշել և այն, որ գիւղացին  
ապրտաւոր է կալսել ցորենը, գարին, կորեկը  
և ինչպէս հաւաքած տասանորդ, տանել Շուշի,  
բէկի տուն:

Եսա ժամանակ շախաթներով քնում է  
չախներումը դարած, որից աչքատ գիւղա-  
ցու չախները փթում են խոնաւութիւնը ծը-  
ծելուց:

Այն, գիւղացիութիւնը, մասնաւորապէս  
աղքատ գիւղացիութիւնը, խաղալիք է դառել  
զանազան դարդաների ձեռքին, նամանաւանդ  
երբ գիւղի բերեկիները նրանց հետ ձեռք  
ձեռքի տւած են լինում:

Բէկը կեղեքում է, դրա մէջ ոչ ոք չէ  
կասկածում: Բայց չէ որ դրա առաջը պիտի  
տանել. ո՞վ պիտի քեզ համար մտածէ, եթէ ոչ  
դու ինքդ, աշխատաւոր գիւղացի. ո՞վ պիտի  
նրա նանկերից խլի, եթէ ոչ դու, աշխատաւոր  
գիւղացի:

Իսկ այդ բոլորը իրագործելու համար  
հարկաւոր է գիտակցել և որ գլխաւորն է,  
կաղճակերպել գիւղացիական միութիւններ  
բում:

Նրիտասարգ



**ԲԱԹՈՒՄԻ ԿԵԱՆՔԻՑ**  
Նամակներ.

**I.**

Այս ամսի (օգ.) 25-ին 30-րդ տարելիցն  
է Բաթումի, որ նա դուքս գալով սուլթան-  
ների բէթիմի տակից, վերջնականապէս ըն-  
կաւ ռուսական արիստոկրատիկան տակ (օգս.  
25-ին 1878):

Թիւրքական յոտի վարչութեան ժամա-  
նակ, Բաթումը բոլորովին աննշտն տեղ էր  
գրուում. մի հասարակ գիւղաքաղաք, որպի-  
սին կարելի է երևակայել Թիւրքիայում:

Այն օրից, երբ մեծագոյն շախերով  
սկսւում է շահագործուծ Բադւի նաւթարդի-  
տարերութեան, այն աշխարհագրական գիւրքը,  
որ ունէր Բաթումը, ինչպէս սե ծովի առաջնա-  
կարգ նաւահանգիստ, բնական էր, որ նրան  
վերապահւած լինէր մի մեծագոյն դիւր, մի  
տեսակ կամուրջ լինել կովկասը արտասահմանի  
հետ կապող: Եւ ահա այդ տեղից է, որ կով-  
կասը գլխաւորաբար արտասահմանի հետ կա-

տարում է իր արտահանութիւնն ու ներմուծումը:

Մի ժամանակ, մանաւանդ 80-ական թւականներէն, Բաթումը արագօրէն շեշտում է իր փթթումի գիղեցիկ շրջանը, երբ Բաթում, նախաշխարհով համաշխարային հրշակ ստացաւ: Բաթումը աւաւ նրա գլխաւոր պահեստը, արտասահման ներմուծող (ինչպէս և ներքին Ռուսաստան) նախիրդի Այս տեսակէտից Բաթումն առանց Բաթումի մեծապէս պիտի կորցնէր իր խոշոր հմայքը: Այս երկու քաղաքները փոխադարձաբար կապուած են իրար հետ մտտեսական զօրեղ կապերով, բայց այս փոխադարձութիւնը, ինչպէս և նրա քաղաքական խոշոր նշանակութիւնը մեր ընտրած նիւթից հետու լինելով, մինք զոնց ենք առնում:

Նայեցէք մէկ առ հսկայապարիսպ շէնքերին, դրանք քաղաքի սիրտն են, միակ յուսոյ պարիւրը և ցամաքած: Եւ այդ ինքնին կեանքի սպասոյց է: 2րկայ 900—5-ի ետուն աշխատանքը, տիրում է ծանր և դժնդակ մահացնող յուսահատութիւն, մէկ կողմից իր բար կաշորդող աշխատանքի աղբիւրներն են շտրանում, հարիւրաւոր անգործ բանւորների փողոց թափելով, միւս կողմից մանր արդիւնարեբութիւնը և աւետրականութիւնն է կանգ առնում, որպէս կեանքը գործարանային աշխատանքների դադարման, և սրա վրայ նաև բարդելով այն մանր յետին գիւղացիութիւնը, որը—հետզհետէ կուլ գնալով միջին և վերին դասակարգային ախորժակին, ակամայ ընկնում են պրոլետարիատի պիղկը: զբանով նա աւելի շուտ խտացնում է պահեստի բանակի շարքերը: Երկակայ գիւղերից հտրիւրաւոր նոր սեփականագործ թիւք և վրացիներ են թափում քաղաք, բոլորն էլ լոկ իրենց բազուկներին ապաւինած և սկսում է առաջարկի, շատ անգամ ամօթալի սակագնումը, որոնք շարունակ արտադրում են անախորժութիւններ բանւորների միջև, ու այսպէս, որը օրին մեծագոյն չափեր ստանալով բեզեբի բանակը, աշխատաւոր փոքրամասնութեանը աւելի և աւելի սեղմում է գինը շրջապատող հոծ բազմութեանից, որոնք շարունակ աշխատում են իրար անքից խելու:

Այդ իսկ պատճառաւ աշխատաւորը արտար չափազանց երկչու է իր իրաւունքների հանդէպ, որից առաւելապէս օգտուում է շահագործող բուրժուան, սուպրէկ գոտնելով, վերադառնում է իր կորցրած բարբարոսական օրէնքներին:

Մենք յետագայ թղթակցութիւններով կը ջանանք մանրամասնօրէն ամեն երևոյթ իր

կարգին պարզարանելու, բայց անմիջապէս աւելացնենք, որ այս բոլորի մէջ մտաւորապէս յանցաւոր է նաև բանւորութիւնը, իր զանդաղամտութեամբ և ցանցառ շարքերով, ահա թէ ինչի նրանք ամեն անգամ տեղի են տալիս, երբ բուրժուան իր ժանիքներն է կրահապնում: Իտասկարգային խորունկ գիտակցութիւնը նրանց մեծամասնութեան մօտ պակասում է. այս հանգամանքը առիթ է ապիս անգամ ևս շեշտելու, որ անդադար շարժման հետ գուզնթացաբար պէտք է ամբացնել նաև նրա ուղեղը, որպէսզի կարելի լինի իսկապէս նրան իր իսկական աստիճանին բարձրացնել: Ե.—Ա.

### ՆԱԲԱԿ ԽՄԲԿՐՈՒԹԵԱՆ

#### I.

Յարգելի խմբագիր!

«Անի» թիւթի համար 20-ում դեռեղւած էր մի յօդւած ինչ որ Ս. Ս. Բիրաբեան ստորագրութեամբ, որտեղ պարունը թոյլ է աւել իրեն զրպարտելու իմ հասցէիս իւր մի շարք տեղեկութիւններով, որը դուրկ է էշմարտութիւնից:

Արդարութիւնը երևան հանելու համար պ. Բիրաբեանին նրախրում եմ միջնորդ դատարանի և տալիս եմ իմ կողմից երկու գատաւորներ, իսկ դուք, պ. Բիրաբեան, ընտրեցէք Ձեր կողմից երկու դատաւորներ, իսկ շուրս ընտրւածները կընարեն հինգերորդին ու կանցնեն գործի ըննութեան:

Նամակս լոյս տեսնելուց յետոյ տալիս եմ որք որ ժամանակ ըննութիւնը կ'իսի յիշեալ տեղում:

Կրասիինիկ, ժողանգն, նախահանքի Մեքենապետ:

#### II.

Յարգելի պարոն խմբագիր!

Մեծապէս ինկրում եմ իմ այս մի քանի տողս տպագրել Ձեր յարգելի թիւթի առաջիկա համարում:

Կարգացի «Շեփորի» II համարում Ասխաբաից «Գործակատարների կեանքից» վերջապրով Բալաբէկ ստորագրութեամբ յօդւածը:

Ռեզոլուտե Ասխաբաթում հասարակութեան մէջ միտք է հղացել, որ այդ նամակի հեղինակ Բալաբէկն էս եմ, որևհետև Ասխաբաթում Բալաբէկ անունով միայն ես եմ, ես Բալաբէկ Մեքենաբանցս. յայնուում եմ ի գիտութիւն հասարակութեան, որ նամակի հեղինակն ես չեմ: Բալաբէկ Մեքենաբանց

ՊՕՍՏ-ԱՐԿՂ

ԲԱՆԱԽԱՆԻ. Բրիկալինն Խնդրում ենք  
ձեր յօդածի առիթով մտնել խմբագրատուն  
ԲԱՆԱԽԱՆԻ. Մ. Շահինեանին: Ձեր պա-  
տասխանը բանոր Բրիկալին խորհուրդ ենք  
տալիս ուղարկել ՎՊուշարաթ Թերթին:

ԲԱԹՈՒՄ. Շ. Ս-ին: Կը զետեղենք Ձեր  
յօդածները: Խնդրում ենք զրել պարզ և փաս-  
տական:

ԹԱԻՐԻԶ. Ա. Յովհաննիսյանին: Թարգ-  
մանական յօդածը չի զետեղուի. աշխատում  
ենք խուսափել:

Խմբագիր հրատարակիչ՝  
ՍԵՆՐԱԿ ՇԱՀ-ՊԱՐՈՆԵԱՆ

Редакторъ издатель:  
Седракъ Шахъ-Паронянъ

Յ Ե Յ Տ Ը Ր Ը Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԲԱԿԻԱՅ ԲԱՂԱՐԱՊԵՏԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-  
ԹԻՆԸ

Գոյութիւն ունեցող արգիւնաբերական  
կանօնագրի համաձայն, երբ բանորը վար-  
ձել է անորոշ ժամանակով, վարձող և վար-  
ձեող կողմերից խրաքանչիւրը կարող է հրա-  
ժարել պայմանագրից, զգուշացնելով միւս  
կողմին իր դիտարութեան մասին երկու  
շաբաթ առաջ, (յօդ. 95.) և բանորի ու գոր-  
ծարանային վարչութեան միջև գոյութիւն ու-  
նեցող պայմանագիրը սպառուում է այս կամ  
այն կողմի հրաժարումից երկու շաբաթ յետոյ  
(104 յօդ. 4 կէտ.): Օրէնքիայս երկու յօդած-  
ներով կաարեալ ճշտութեամբ որոշած է  
պայմանագրի աւարտման մօտենալը և նոյն-  
պէս այն, որ մինչև այդ մօտենալի համեմը  
վարձման պայմանագիրը, ուրեմն և նրանից  
բխող իրաւունքներն ու պարտականութիւն-  
ները պահպանում են իրենց զօրութիւնը ի-  
րար հետ պայմանաւորւող երկու կողմերի հա-  
մար: Օրէնքի կիրառումը գործնականին մէջ  
ցոյց աւաւ որ մի քանի ղէպքերում ձեռնար-  
կուները յայտարարելով բանորներին, վարձ-  
ւած անորոշ ժամանակով, վերջնահաշի նա-  
խագրուչացումը, հնարաւորութիւն չեն տալիս  
հեռացւող բանորներին աշխատել օրէնքով  
սահմանուած երկու շաբաթը վերջնահաշի

ստանալու համար: Այսպիսի ղէպքերում մի-  
անգամայն արդարացի է ձեռնարկուների,  
այն յայտարարութիւնը, որ հեռացւող բան-  
ւորներին վճարի նախօրոք երկու շաբաթու  
աշխատավարձը: Այս ղէպքը միակն է, երբ  
օրէնքի հիման վրայ անորոշ ժամանակով  
վարձւած բանորը հեռացելիս ստանում է  
իրաւ աշխատավարձը երկու շաբաթ առաջ,  
առանց այդ օրերը աշխատելու:

Սակայն վերջին ժամանակներս տեղի  
են ունեցել շատ ղէպքեր, երբ անորոշ ժա-  
մանակով վարձւած բանորները հեռացելիս  
զիմել են ինձ գանդատելով, որ հեռացնե-  
լիս իրենց չեն վճարել երկու շաբաթուայ աշ-  
խատավարձը: Քննութիւնները պարզեցին, որ  
այդ բանւորներին արւած է եղել կատար-  
եալ հնարաւորութիւն աշխատելու հաստատ-  
ւած երկու շաբաթը, բայց նրանք չեն աշխա-  
տել: Եղել են նոյնպէս գանդատներ հեռաց-  
ւող բանւորների կողմից, որոնց մէջ նրանք  
ձգտել են վերջնահաշի ժամանակ ստանալու  
իրեն միանալով վարձադրութիւն մի, երկու  
կամ մինչև անգամ երեք ամուսյ ոտնկէլ:  
Վերն ասածի հիման վրայ, բանւորների այդ-  
պիսի պահանջները շրջափախ գոհացում ստա-  
նան, որովհետև նրանք չեն բղխում օրէնքի  
դրութիւնից:

Եթէ այդպիսի վճարումներ տեղի են ու-  
նենում Բագում, նրանք օրինական համար-  
ւել չեն կարող և միայն գործարանաէրեքից  
են կախւած, որովհետև իսկապէս չի կարելի  
ասանձին արգիւնաբերիին արգելել, վճարել  
հեռացւող բանւորներին իրաւ սեփական ցան-  
կութեամբ վարձատրութիւն միանալով կամ  
ինչպէս նէր, կախւած բանւորի ծառայու-  
թեան ժամանակից կամ նրա կարիքից:

Թէև վերոյիշեալը արդէն մի քանի ան-  
գամ յայտարարուել է Բագի նաւթային շրջա-  
նում ի գիտութիւն ընդհանուրի, անհրաժեշտ  
եմ համարում նոյնը պնդել մի անգամ ևս, որ-  
պէսզի թուրք հեռացումները հիմուած լինեն  
օրէնքի վրայ, իսկ ժամանուող ղէպքերում, երբ  
նէր կամ օժանդակութիւն օրինական նօր-  
մալից դուրս, բացառապէս թողնել գործա-  
տիրոջ քարէհայեցողութեան:

Գործատիւները թէ մէկ և թէ միւս ղէպ-  
քում հրաւիրում են վերջացնելու բանւորներին  
հետ հաշիւները անյապաղ:

Բագի վարչապետ Գեներալ Մայնօր  
Փօլքումս

28 օգոստոսի, 1908 թ. Բագու

ՎԵՃՈՒՑՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ  
ԴՐՔՆԵՐԸ

- Մրտեան. Ժամանակ է սթափելու . 15 Կ.
- Մրտեան. Դաշնակցութեան կրիզիսը. 15 »
- Լիւիօ. Ինչ են ցանկանում սոցիալիստները 3 »
- Րիխարդ. Ինչու ենք անջատում Դաշն. 5 »
- Աշխատանքի երկերը . . . . . 3 »
- Րիխարդ. Ազգութիւն և դատակարգ (սահաւարտ) . . . . . 15 »
- Կիլմէն. Ինչպէս է ստացւում շահը և ինչպէ՞ս գիշտում հարստութ. 10 »
- Զեմլինսկ. Ինչպէս են կուում գիւղացիք հողի և ազատութեան համար 10 »
- Վերագնահատումներ. Գիտական-քննական ժողովածու. գիրք 1. . . 1 ր. —
- Մրտեան. Խրիմեանի ժաշկան առթիւ . 5 »

Աւրիշ քաղաքներից գրին՝ Բաքու, книжный магазин «Сотрудник». կամ  
Փանեւաք՝ Բաքու, Кривая ул. Гр. Вехпетяну.

Փանեւաքից դուրս գնողներին, արւում է 20% զեղծ «Վերագնահատումներ»-ի համար: Իսկ 30% մնացած գրքերի:

Открыта подписка на ежедневную общественно-литературную и политическую газету

# „БАКУ“

ПОДПИСНАЯ ЦЕНА

Въ гор. Баку: на 12 мѣсяцъ. 7 руб., 11 м. 6р. 50к., 10 м. 6 р., 9 м. 5р. 50к., 8 м. 5 р., 7 м. 4 р. 50 к., 6 м. 4 р., 5 м. 3р. 50к., 4 м. 3р., 3 м. 2р. 50к., 2 м. 1 р. 50к., 1 м. 1р.—Съ пересылкой въ другіе города: на 12 м. 8р. 50к., 11 м. 7 р. 50 к., 10 м. 7р., 9 м. 6р. 50к., 8 м. 6 р., 7 м. 5р. 50 к., 6 м. 5 р., 5 м. 4 р. 50 к., 4 м. 4р., 3 м. 3р., 2 м. 2р. 50к., 1 м. 1р. 50к..

Адресъ: Баку, Молоканская, гостиница «Кавказъ» Телефонъ № 518. 1—2

Լոյս է տեսել և վաճառւում է «ԱՆԻՐ»-ի գրադարան № 1

## Վ Ե Ր Ս Ք Ն Ա Հ Ա Տ Ո Ւ Մ Ն Ե Ր Ը

Գիտական-քննական ժողովածու. I. Գիրք հետեւեալ բովանդակութեամբ

- Մօսկնաք—Պճրագրութիւն
- Փամահայեցողութիւն—Էլվինա
- Սոցիալիստական պրօբլեմներ—Րիխարդ
- Սուբէկտիւ շտկման թէօրիան—Լ. Ռոստոմեան
- Զեկուցում և իրականութիւն—Ն. Ասոյեան
- Լէժնիդ Անդրէէի «Սաւարը»—Ա.-Պօ
- Հում նիւթեր Հայ նացիօնալ—Գեմեղրատիայի պարզացման պատմութեան համար:
- Գինն է 1 բուլի
- Մարում է բոլոր յայտնի գրափածառանոցներում:

# „Ա Հ Խ Ա Տ Ա Ն Ք“

Գրափաճառանոցը (Կոլիբակինսկանա փող., տ. Գիլդարեանի, Մարդասիրակ. Ընկ. Գրադարանի գիմնաց) հայ բանագրների մէջ գրքերի տարածմանը նպաստելու համար վաճառում է բոլոր գրքերը զիջումով: «МОЛОТЪ»-ի հրատարակութիւնները 50 տօկոս զիջումով: Ուսումնական տարւայ համար ստացւած են ամեն տեսակ դասագրքեր և դասարանական ուխտայքներ: Աշակերաններին դասագրքերից 5 տօկոս զիջում:

ԲԱՆԻՈՐ ԸՆԿԵՐՆԵՐ, ՓՈՒԹԱՅԷՔ ԱՆԴԱՄԱԳԻՒՆՆՈՐ

# „ԱՇԽԱՏԱՆՔ“ (Տրուդ)

ա ս ա ո ո դ ա կ ա ն ը ն կ ե ռ ա կ ց ո շ ե ա ն

ԵՆՁ Է ԹՊԱՌՈՂՈՒՆ ԸՆԿԵՐԱՊՈՒԹՅՈՒՆ ԵՍԹՈՏԵՆՅԷՂ՝ ՄԻՑ ԳՈՋՄՈՒՆԻՔՈՂՆԵՐԸ ԲՈՆԻՓՐՆԵՐ ԵՆ

Սպառողական ընկերակցութիւն «ԱՇԽԱՏԱՆՔ»-ը (Տրուդ) սպառողների փոխադարձ օժանդակութեան և խնայողութեան մի հիմնարկութիւն է, նա կազմակերպում է ամենաամենաբարձր պիտոյքների ընկերակցական գնումը և հնարաւորութեան հէնց աստղին դէպքում անցնում է նոյն պիտոյքների արդիւնաբերութեան:

Սպառողական ընկերակցութիւնը «ԱՇԽԱՏԱՆՔ»-ը ապահովում է սպառուելիք ապրանքների լաւութիւնը:

Նա ազատում է մեզ ամենօրեայ թունաւորումից կեղծւած և փթած սնունդի միջոցով. նա փարձեցնում է մեզ կանխիկ վճարման. նա աւերացնում է սպառումը. նա հասցնում է օգնութիւն հիւանդութեան, ծերութեան և զործազրկութեան դէպքերում. նա հոգ է տանում նոյնպէս իր անդամների մտաւոր զարգացման մասին. նրա կոչումն է, մի խօսքով, արթուն կերպով հսկել սպառողների շահերի պաշտպանման վրայ:

Նրանք, որոնք կամենում են բաժնեկից լինել, վայելելով մաս-մաս վճարելու լայն հնարաւորութիւն, թող դիմեն՝

**ԲԻԲԻ-ԼԷՆԻՆԱԹ.** Սպառողական ընկերակցութիւն «Տրուդ» խանութում (Էլիէ-տրական ոյժ)՝ Նորելի նաւթահանքում Տիխամոյովի մօտ, Բիբի-Լէյրաթեան ընկերութեան մէջ Սիկօզինի մօտ, Մուխատարովի զործարանում Արուխովի մօտ. Բողշիլդի զործարանում Մուէաֆարովի մօտ. «Օլէուս» զործարանում Եզուրիզինի մօտ:

**ԲԱՂԱԽԱՆԻ.** Բենկէնդօրֆի նաւթահանք Սամկայեի մօտ:

**ԲԱՂԱԽԱՆԻ.** «Կասպեան ընկ.» գլխաւոր կանաւորայում, Սմրատ Եանինեանի մօտ:

**ԶԱՐԲԱՏ.** «Կովկաս և Մասիս» Ժիվատովսկու մօտ:

**ՌՈՄԱՆԻ.** Նօրելի գազային զործարան Սկրիպնիկովի մօտ:

„ Մանիֆաշեանի նաւթահանք. Յովհաննէս Տէր Մկրտչեանի մօտ:

**ՍԵՒ ԲԱՂԱՔ.** «Կասպեան-մաշին ընկ.» Նարինեանի մօտ:

**ՍՊԻՏԱԿ ԲԱՂԱՔ.** «Կասպեան տրուբապրուօզ» Մալթօրովի մօտ:

**ԲԱՂԱՔՈՒՄ.** Ադասի Տէր-Գրիգորեանի մօտ, «Կոչկակարների միութեան» մէջ:

կարանախննանա փող. տ. Եահնաղարեանի №, ընակ. № 45.